ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 3. 1956 Общественные науки

Միք. Բարթիկյան

ՀԱՅ ԱՂԱՆԴԱՎՈՐՆԵՐԻ ՀԵՏՔԵՐԸ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀՈՒՆԱՍՏԱՆՈՒՄ

Հունաստանում և մասնավորապես Թրակիայի շրջանում տարածված բանավոր ավանդության մեջ պահպանվել է այն հավատալիքը, թե եղել են արմենիդես *(հայեր) անունով չար ոգիներ, որոնք փնտրում են ծննդականներին և նորածիններին։ Ծննդաբերության և դրան հաջորդող օրերին պատահած մի շարք հիվանդություններ — ուշագնացություն և այլն — վերագրվել են այդ ազդեցության և կոչվել* արմենիազմա *(արմենահարություն)։ Հիվանդությունը դարմանելու համար օգտագործվող դեղերն էլ կոչվել են՝* արմենա *(երիցուկ),* արմենոպորտա *(արմենադուռ),* արմենոքսիլ *(արմենափայտ),* Պանագիա արմենոկրատուսա *(աստվածածին արմենադուսպ) և այլն։*

Հունական, հատկապես Թրակիայի շրջանի հույների ֆոլկլորում պահպանվել են նաև հայկական այլ հետքեր։

Արդ, տնտեսական և քաղաքական ինչ հարաբերությունների արդյունք են դրանք, ինչպես են առաջացել այդ հավատալիքները Հունաստանում, ինչ ճանապարհով։

Այս հարցերի պատասխանն է, որ փորձելու ենք տալ ներկա հոդվածում։

* * *

Հայերի հարաբերությունը հույների հետ սկսվել էր հնագույն դարերից, այն առավել նշանակալից դարձավ քրիստոնեության տարածման առաջին դարերում։ Հետագա դարերում առավել ևս մեծանում են հայ-հունական հարաբերությունները, ընդգրկելով տնտեսական, քաղաքական և կուլտուրական ընագավառները։

Այս ամբողջ ժամանակամիջոցի վերաբերյալ, սակայն, մեզ չի հասել որևէ փաստ, որ հայերը նկատվեին չար ոգիներ, դևեր։

Բյուզանդական կայսր Մավրիկը, նպատակ ունենալով ապահովել կայսրության արևելյան սահմանները, բազմաթիվ հայերի գաղթեցնում է Թրակիա, նրանց ապահովում հողով և բանող ուժով։ 7-րդ դարի պատմիչ Սեբեոսի վկայությամբ այդ գաղթականության թիվը հասնում էր 30.000-ի, եթե ընդունենք, որ որոշ չափով չափազանցված է այս թիվը, այնուամենայնիվ այդ ժամանակվա ընթացքում բավականաչափ մեծ թվով հայեր հաստատվում են Թրակիայում։

Ութերորդ դարի կեսին Լևոն Իսավրացին բարձրանում է Բյուզանդական գահը։ 726 թվին նա մի հրովարտակով արգելում է պատկերապաշտությունը։ Չնայած այն հանգամանքին, որ Լևոնի ձեռնարկած միջոցառումը հետապնդում էր բացառապես տնտեսական նպատակ — թու-

յացնել վիթխարի կալվածների տեր վանականության ազդեցությունը — այնուամենայնիվ, հոգևորականությունը, պայքարին տալով կրոնական, գաղափարական բովանդակություն, փորձում է պատկերամարտ կայսրին հռչակել՝ հերետիկոս, անաստված[1]։

Հակառակ հոգևորականության կատաղի դիմադրությանը, Լևոնի մահից հետո, նրան հաջորդող Կոստանդին Կոպրոնիմոսը (741—775) շարունակում է նույն պատկերամարտության քաղաքականությունը. նա եկեղեցու մեջ պատկերներ կախելը, նրանց երկրպագելը և պաշտելը նկատում է կռապաշտություն։ Պատկերապաշտները, հավաքվելով կայսեր փեսա հայազգի Արտավազդ զորավարի շուրջ, պատերազմ են հայտարարում Կոստանդինի դեմ, սակայն պարտվում են։

Կոստանդին Կոպրոնիմոսի դեմ կանգնած էին երկու թշնամիներ՝ Արևելքից արաբները, Արևմուտքից՝ բուլղարները։ Նա հաղթում է արաբներին, և չցանկանալով, որ Հայաստանի հարավում ապրող հայերը օգտագործվեն արաբների կողմից Բյուզանդիոնի դեմ, ծրագրում է իր գրաված շրջանի Կոմագենեի (այժմյան Մալաթիայի, Ատիյամանի) շրջանի հայերին տեղափոխել Թրակիա։

Միանգամայն քաղաքական, ռազմագիտական նկատառումով կատարված այս բռնագաղթի հետևանքով, կատաղի պատկերամարտ Կոպրոնիմոսը վանականների դեմ մղվող պայքարում ձեռք էր բերում քաղաքական ուժեղ հենարան, քանի որ գաղթեցված հայերի մեծ մասը պավլիկյան գաղափարախոսության կողմնակից էին։ Թեոֆանես պատմիչն իր «Ժամանակագրություններում» ասում է. «Կոպրոնիմոս, Թեոդոսուպոլսից և Մելիտինեից սիրիացիներ և հայեր գաղթեցրեց Թրակիայում 747 թվականին, ինչ որ պատճառ եղավ պավլիկյան աղանդի տարածմանը»[2]։

Կոնստանդին Ե-ի թագավորության շրջանում (746—752 թթ.) հայկական շրջաններից փոխադրված պավլիկյանների թիվը հայտնի չէ, որոշ է միայն, որ կայսերական բանակի մեջ ամբողջ հազարյակներ պավլիկյաններ էին, որոնք իրենց գաղափարները տարածում են բանակում[3]։

Հայերի մասսայական այս երկրորդ գաղթի ընթացքում, հույները հայերին (արմենիդես) ճանաչում են որպես պավլիկյան աղանդավորների, պատկերամարտերի։

Դեպի Թրակիա մի մեծ բռնագաղթ էլ տեղի է ունենում բյուզանդական Հովհ. Զմշկիկ կայսեր օրով։

Ըստ Թեոֆանեսի (8-րդ դարի կեսերին) «ամբողջ Ասիայում և Հունաստանում սփռվել էին մանիքեցիներն ու պավլիկյանների արբանյակները»։ Թրակիան լցվել էր հայ աղանդավորներով, որոնք դառնում են լուրջ վտանգ Բյուզանդական կայսրության համար։

Թեոդորա կայսրուհու օրով, պավլիկյանների տնտեսական և քաղաքական համոզմունքները այնքան թշնամանքով էին դիտվում, որքան Հռոմի հեթանոս կայսրերը դիտում էին քրիստոնյաների համոզմունքները։ Պոլսի մոլեռանդ հույները հաճույքով էին դիտում մանիքեականների նկատ-

---

[1] *A. A. Vassiliev.*—Hist. de l'Empire Byzantin, Paris, 1932, vol. I, էջ 336.

[2] *Bonne*, 1839, vol. I, էջ 602.

[3] K. Παππαρυγόπουλου.—Ἱστορία τοῦ Ἑλλ. Ἔθνους, 6-րդ հրտ., հատ. Գ. մաս Բ., էջ 73։

մամբ գործադրվող պատիժները, ինչպես որ Հռոմի արիստոկրատիան հաճույքով էր դիտում կրկես նետված քրիստոնյայի մահապատիժը։

Աննա Կոմնենեն իր դասակարգային հակառակորդներին՝ աղանդավորներին նկարագրում է իբր արյունածարավ, վայրագ մարդկանց[1]։

Հույն կղերականությունը, որը հայերի հանդեպ թշնամություն էր սերմանում դեռևս 572 թվականի եկեղեցական ժողովի օրերին, այժմ առավել մոլեգին պայքար է մղում նրանց դեմ։

Հայտնի հույն բուրժուական պատմագիր Կ. Պապպարիգոպուլոսը իր Ἱστορία τοῦ Ἑλληνικοῦ Ἔθνους ութ հատորյա աշխատության չորրորդ հատորի առաջաբանում նշել է. «Բյուզանդիոնում բարենորոգչական (կրոնական) ավանդարդներ հանդիսացած կայսրերն այդ ձեռնարկում իրենց դաշնակից էին արել աղանդներից ամենահամարձակը — պավլիկյանությունը...»

Ուրեմն Հայաստանից կամ հայկական շրջաններից Թրակիա գաղթեցված հայերը, որոնք մեծ մասամբ պատկերամարտներ կամ աղանդավորներ էին, հույն վանականության և իշխող դասի կողմից ներկայացվում էին հերետիկոսներ, ավազակներ։ Ավելին, ճայեր (արմենիդես) ասելով նրանք առհասարակ հասկանում էին աղանդավորներ[2]։

Միջին դարերում և նույնիսկ ավելի ուշ, քրիստոնյա հոգևորականությունը տարածում էր այն գաղափարը, թե հերետիկոսները, աղանդավորները հարաբերության մեջ են գտնվում դևերի և ոգիների հետ, թե կախարդություն և հմայություն են անում նրանք, մանուկներ են սպանում, նրանց արյունը օգտագործում կախարդական և կրոնական արարողություններում[3]։ Եպիփանեսը նույնն է վերագրում աղանդավորներին իր «Գիրք հերձվածոց»-ում (Κατὰ Αἱρέσεων) և ասում է, որ աղանդավորները մոգություն, կախարդություն են անում, և հարաբերություն ունեն դևերի հետ։ Դրա համար էլ Կոստանդին Ե. պատկերամարտ կայսրին վերագրվեց սատանաների հետ հարաբերություն ունենալ։

Փոտիոս պատրիարքն իր Διήγησις Περὶ τῆς Μανιχαίων αναβλαστήσεως գործում, ուր մանիքեականությունը նույնացնում է պավլիկյանության հետ, գրում է, որ նրանք դևերի հետ հարաբերություն ունեն, նրանց կոչում է կախարդ, ոճրագործ և այլն[4]։

Մանիքեականների ու պավլիկյանների դեմ նույնպիսի զրպարտություններ է անում Պետրոս Սիկիլիացին, նրանց վերագրելով մանկասպանություն և այլ կարգի ոճիրներ[5]։

Բուլղար հոգևորականների կողմից պատրաստված հմայեկների մեջ հաճախ հերետիկոսների, աղանդավորների, հետևաբար դևերի և չար ոգիների հոմանիշ են գործածվում պավլիկյան, մանիքեական, արմեններ և բոգոմիլներ անունները։

---

1 Աննա Կոմնենե, Ալեքսիադա, գիրք ժդ, 8։

2 *A. A. Vassiliev*, նույն տեղում, Vol. II, էջ 1։

3 *Maury*, La Magie et l'astrologie etc, էջ 101, տես և ծանոթ., էջ 55։

4 *Migne*. s. a. հատ. 102, սյուն. 32։

5 Անդ, հատ. 104, սյուն. 1241։ Մ. Օրմանյան, Ազգապատում, հատ. Ա, էջ 817։ Չամչյան. Պատմ. Հայոց, հատ. բ, էջ 385։

Այս բանը հաստատում է և Փարիզի Ազգ. մատենադարանի № 2316 հմայեկը, որ 6-րդ կամ 7-րդ դարի գործ է համարվում։ Այստեղ հմայեկ։վում են ամեն կարգի չար ոգիներից և դիվահանդիպումներից և հրամայվում է նրանց, որ դուրս գան աստուծո ծառայից և մտնեն կախարդողների գլխում, որոնք կարող են լինեն՝ կախարդ կամ կախարդուհի, գաղղիացի կամ գաղղուհի, պարսիկ կամ պարսկուհի, եգիպտացի կամ եգիպտուհի, բաբելոնացի կամ բաբելոնուհի, սուրիացի կամ սուրիացուհի հրեա կամ հրեուհի, գնչու կամ գնչուհի, պավլիկյան կամ պավլիկուհի, արմենիս կամ արմենուհի, կիպրոսցի կամ կիպրուհի։

Արիստ. Նեոֆիտոսը Կիրասոնի շրջանի ավելորդապաշտության մասին խոսելիս ասում է, թե ակնահարությունը (աչքի բերելը) ամենից ծանոթ կախարդումն է, որի ամենագորավոր ճանաչումն ու բուժումը լինում է մասնավոր մի հմայեկ «կարդալով» և որ «կարդացողը» գրեթե առանց բացառության մի հայուհի է, որը գերդաստանական ավանդությամբ սովորել է «կարդալիքն» և անելիք մաղթանքներն ու աղոթքները[1]։

Հյուսիսային Հունաստանում և մասնավորապես Թրակիայում պառավների բերնից լսվում է՝ ἀρμένιον κακως ἐπηρεάζουσι τας Δεχωϊδας καὶ τά παιδιά (հայը վատ է ազդում) ψιθυρίζει (տղացկաններին և երեխաներին), իսկ տղացկանների տագնապն ու տենդը վերագրում են ἀρμένης (արմենիս) կամ ἀρμενιδες (արմենիդես, հոգ.) կոչված դևերին, չար ոգիներին։ Եվ երբ տղացկանը կամ երեխան հիվանդանում է, ասում են՝ ἡ λεχώνα ἀρμένισ'- (ἀρμενίστηκε) (ի լեխոնա արմենիստիկե), որ նշանակում է՝ տղացկանը արմենահար եղավ (հիվանդացավ, վրան նոպա եկավ, տենդի բռնվեց)։ Նույնպես ասում են՝ ἀρμενιστηκε ἐπὶ λεχοῦς βασκαίνετε (արմենիստիկե եպի լեխուս բասկենետե) այսինքն՝ տղացկանը արմենահար է եղել, կախարդվել է, չար-աչքի է եկել[2]։

Արևելյան Ռումելի, Գավաքլրի շրջանում, տղացկանը, երբ գիշերով ցանկանում է սենյակից դուրս գալ, վառված ածուխ են գցում գետինը, որպեսզի անցնի վրայից՝ διά νά μή ἀρμενιάσ' այսինքն, որպեսզի արմենահար չլինի[3]։

Գիշերները ոչ միայն չեն խոսում իրար հետ, այլև տղացկանի հետ, որպեսզի նրանց աղմուկը չար ոգիների ուշադրությունը չգրավի, ոգիներ, որոնք կարող են վատ ազդեցություն գործել տղացկանի վրա, ահարեկել, կամ խոովել նրա հոգեկան և մարմնական վիճակը։ Այս պարագայում պետք են ունենում մի հայ քահանայի աղոթքին և նրա պաշտպանությանը[4]։

Տղացկանին ծննդարերությունից հետո թույլ չեն տալիս քառասուն օր տնից դուրս գալ։ Դռները փակում են արևմուտքից։

Եթե, հակառակ այս բոլորին, երեխան հիվանդանա, ասում են, որ նա արմենահար է եղել և հրավիրում են մի հայ քահանա, որ «կարդա» և ազատի երեխային չարքից։ Նրանք հաճախ այդ միջոցին դիմում են անդամ երեխայի լացը կտրելու համար։

---

[1] Ὁ ἐν Κωνσταντινουπόλει Ἑλλ. Φιλολογικος Συλλογος Τομ. ΚΒ' (1891), էջ 147։
[2] Μιλτ. Λουλουδοπουλος—Ἀνεκδοτος Συλλ. κ. λ. π. էջ 145։
[3] Նույն տեղում, էջ 135։
[4] Κ. Κουρτιδη—Συλλ. Κωνστ. πόλεως. տես և Ἀρχ. Θρακικοῦ Θησαυρου, Ι, էջ 14։

Կյումուլճինայում տղացկանին առանձին չեն թողնում, որպեսզի արմենահար չլինի։ Եվ երբ մեկնում են նրա սենյակից, նրա մոտ դնում են՝ ալեր, խմորի գլան, հին հողաթափ և այլն[1]։

Ծննդարերությունից հետո, մանկարարձը տղացկանի մազից կախում է սխտոր, ոսկի մատանի կամ ոսկեդրամ, որոնք մնում են մինչև մաքրվելը։ Նույնն են անում և երեխային՝ պահելու համար չար աչքից։ Սենյակի դուռը կապում են մի կարմիր կարմիր թել և ասում են, որ այդ ձևով կապում են τὴν ἄρμενον (արմենոն), առանց կարողանալու բացատրելու, թե ինչ բան է այդ և, սակայն. անում են, որպեսզի տղացկանը չարմենահարի-ἀρμενιαστῆ (արմենիաստե)։

Թեսալիայում հավատում են, թե երբ գիշերանց մեկը մտնում է տղացկանի սենյակը, վերջինս ունենում է ջերմ, դառանցում է — αρμενιαζιται ἡ λεχω[2]։ Ἀρμενιαζιται նշանակում է տղացկանը ուղեղային տագնապ ունի, որի պատճառ կարող են լինել՝ ա) հայհոյություններ, բ) եթե տղացկանը որոշ օրերից առաջ (սովորաբար ծննդարերությունից 15 օր) անկողնից ելնի, գ) եթե պահեցողություն չանի։ Ἀρμενιασχη (արմենահար) եղած կնոջ համար կանչում են պառավներ, որոնք գիտեն ξεαρεμνιάζω (քսեարմենիազո) անել (արմենահատել)։ Այս կանայք խունկ և αρμενια (երիցուկ) են վառում խնկամանի մեջ և հիվանդ կնոջը մոտեցնելիս ասում են մի շարք խորհրդավոր և գաղտնի խոսքեր։ Հաճախ կանչում են քահանա։

Բալով հմայակին, ξεαρμενιαστρα (քսեարմենիաստրա-արմենահատուհին, կախարդուհին) շատ ցած ձայնով ասում է, ինչ որ բան։ Ըստ ծեր կանանց պատմածի՝ նա ասում է. «Ինձ արմենահար արեց (կախարդեց, աչքի բերեց) մայրս, ինձ արմենահար արեց հայրս, ինձ արմենահար արեցին եղբայրներս, ինձ արմենահար արեցին զարմիկներս»։ Եւ տղացկանը լալով կրկնում է նույն խոսքերը։ Որոշ կախարգուհիներ հուռութք էին անում. հմայեկներ կարդում, ասելով. «գարձի՛ր ետ, գարձի՛ր ետ», իսկ Սերեզի շրջանում՝ «գարձի՛ր ետ արմենաբ։սր» (ἀρμενόπετρα արմենոպետրա)[4]։

Արևելյան Բուլղարիայում, ուր բուլղարների և հույների հարաբերությունը եղել է սերտ, տղացկանների և երեխաների հիվանդությունները վերագրում են Armenici կամ Ermenki-ների։ Տղացկանին չեն թույլ տալիս դուրս գալ քառասուն օրից առաջ։ Հավատում են, թե ծննդարերությունից երեք օր վերջ մայրն ու երեխան հիվանդանում են, եթե մանկարարձը մոռացել է արծաթ դրամ դնել մանկան բարձի տակ։ Եվ եթե պատահի որ, իբր թե այդ մոռացման հետևանքով հիվանդանա մայրն ու երեխան, կանչում են bajacka (կախարդուհի), որպեսզի «կարե» տղացկանը, ավելի ճիշտը՝ armenius-ը։ Այս գործողությունը լինում է հետևյալ ձևով. կախարդուհին հիվանդին պառկեցնում է, կամ նստեցնում տան գլխավոր ծպեղի տակ. հետո մի կացին է վերցնում ու շեղբի կողմովը խփում է գետնին, հիվանդի չորս կողմերին, միաժամանակ ասելով՝ հմայակը, որը կրկնում է հիվանդը. իսկ եթե անկարող է, կրկնում է նրա մայրը կամ ներկաներից որևէ մե-

---

[1] Λαογραφια II, էջ 414, Ἀρχ. Θρακικοῦ Θησαυρου I, էջ 14։
[2] Κ. Οἰκονομου — Περί γνησσ. προφορ. της Ἑλλ. γλωσσης էջ 361։,
[3] Ἀχ. Τζαρτζανου „ „ „ „ էջ 480։
[4] Ἀθηνα՝ ΚΔ՝ էջ 461։

կը։ Հետո մի թել սպիտակ, մի թել էլ կարմիր դերձան և մի կտոր կղմինդր դնում են հացի մեջ ու զետեղում հիվանդի սնարում ու կացինով խփում։ Երբ հիվանդը հարցնում է.

— Ի՞նչ ես կտրում։

— Արմենիդես, պատասխանում է կախարդուհին.

Այս գործողությունը կրկնվում է երեք անգամ, որից հետո կախարդուհին մտմտում է կախարդական մի բանաձև։

Թրակիայի հյուս. արևելյան շրջանում, Սոզոպոլիս (նախկին Ապոլոնիա) կոչված գավառում գործածվում է՝ αρμενιάτικα (արմենիատիկա) բառը՝ որ αρμενίων-ի (արմենիոն) հասցրած հիվանդությունն է և ունի αρμεναζμα (արմենիազմա)-ի հետ գոեթե նույն իմաստը։ Երբ ծծնդարերությունը տեղի է ունենում, մանկաբարձը մի շարք գործողություններ է անում, որպեսզի «ծնի և էգ վիշապը,»։ Դրանք կատարվում են, որպեսզի տղացկանը չենթարկվի ու չտառապի գիշերակոխ-ից և αρμενιάτικα-ից, ինչ որ պետք է հոմանիշ նկատել 'αρμεναζμα (արմենիազմա) կամ 'αρμένισμα (արմենիզմա)-ի (արմենահարություն)։

Թրակիայի Կարիոն կոչված գավառում, նոր հարսերին տրվում է "Αρμενα (արմենա) անունը։ Հարսանիքի օրը, սովորաբար կիրակի, վաղ առավոտյան երկու մոտիկ ազգականներ կամ մտերիմներ գալիս են և լոգացնում փեսին և անցնում ոստայնանկի առեջից, որպեսզի իրեն չբռնեն αρμενα (արմենա)-ները, որպեսզի չկախարդվի, չար աչքի չգա, գեշություն չհասնի։ Այս բանը անում են առհասարակ մոգական հանգույցների, կողպեքների և այլ ավելորդապաշտությունների իբր կանխարգելություն[1]։

Մակեդոնիայի որոշ շրջաններում, հարսին նստեցնում են փսիաթի վրա, որի տակ դրված է լինում արորի երկաթ խոփը, որպեսզի երկաթի նման ամուր լինի։ Հետո առնում են արորի փոկը և երեք անգամ անցկացնում հարսի իրանի շուրջը, որպեսզի արմենահար չլինի ու փոկի նման ճապուկ լինի[2]։

Գրևանայի շրջանում, Սեթովայում գործածական է τα αρμένια καπνιζουν τίς λεγῶνες, ἄμα ἀρμενιζονται։ (տա արմենիա կապնիզուն տիս լեխոնես ամա արմենիզոնտե), որ նշանակում է՝ երիցուկ են ծխարկում տղացկաններին, երբ արմենահար են լինում[3]։

Բուլգարական Valesko գավառում հավատում են, որ Navis (հունական ներեյիդների համապատասխանող, իսկ բուլգարների համար կախարդական, վհուկային դևեր իմաստով) կոչված երեք կանայք կան, որոնցից երկուսը Ermenkas (հայուհիներ) են, իսկ երրորդը՝ Nasenka է կոչվում։ Սրանք չարչարում են ու հիմարացնում տղացկաններին[4]։

Այս հավատքի արդյունք պետք է համարել այն, որ տղացկանների հիվանդությունների ժամանակ կանչում էին հայ կախարդուհիներ, որպեսզի հմայեկեն կամ դարմանեն հիվանդներին։

Ուշագրավ է Թրակիայում տարածված մի ժողովրդական «պանդուխ-

---

[1] Μιλτ.—Λουλουδοπουλος—'Ανεκδοτος Συλλ, էջ 186։

[2] „Μακεδονικη Ζωη" IV, էջ 2863։

[3] „Λαογραφια", VII, էջ 121։

[4] Strauss — Die Bulgaren.

տի երգն, որտեղ Հայաստանում գտնվող հույն պանդուխտը իր բարևներն ուղարկելով հարազատներին, հայտնում է, որ չի կարող հայրենիք վերադառնալ, որովհետև կախարդված է հայուհու կողմից.

Անապատի իմ սև ծիծեռնակներ
Եվ սպիտակ աղավնիներ իմ ափերի,
Որ այնքան բարձրից գնում եք դեպ՝ իմ հայրենիք
Մի խնձորենի ունեմ իմ տան բակում, այնտեղ թառեցեք
Եվ ասացեք իմ բարի կնոջը,
Ուզում է՝ թող մայրապետ լինի, ուզում է՝ թող ամուսնանա,
Ուզում է՝ թող զգեստները ներկի ու սևեր հագնի.
Թող չսպասի ինձ, թող չհամբերի։
Ինձ այստեղ, Հայաստանում ամուսնացրել են
Մի հայուհու՝ կախարդուհու աղջկա հետ,
Որը կախարդում է աստղերն ու երկինքը.
Կախարդում է թռչուններին՝ ու չեն թռչում.
Կախարդում է գետերին՝ ու չեն հոսում.
Կախարդում է ծովը ու չի ալեկոծում.
Կախարդում է նավերը ու չեն նավարկում.
Կախարդում է և ինձ ու չեմ կարողանում վերադառնալ,
Ճանապարհ եմ ընկնում, ձյուն է գալիս,
Ետ եմ դառնում. աստղեր են փայլում, արև ծագում։
Թամբում եմ ձիս, թամբը ցած է ընկնում։
Կապում եմ սուրս, քանդվում, ընկնում է մնջքիցս,
Նստում եմ, որ նամակ գրեմ, սրբվում է գրածս՝։

Սերեզի հույների Վերին Հրեշտակապետաց եկեղեցում, հին և մաշված մի մագաղաթի վրա գտնվում է Աստվածածնի մի նկարը, որի ներքևը գրվել է՝ Παναγία Ἀρμενοκρατοῦσα (Պանագիա արմենոկրատուսա — Աստվածածին արմենախափան)։ Նույն քաղաքի հարավային կողմում գտնվում է Ἀρμενοπετρα (արմենոպետրա — արմենաքար) ժողովրդական անունով ծանոթ մի ժայռ, որ մեհեռրական է գուցե։ Այս ժայռից կտորներ հավաքում են այցելուներն ու պառավները և գործածում իբրև հմայակ, փոշիացնելով խմեցնում են հիվանդներին իբրև դարման կամ դեղթափ[1]։

Մակեդոնիայում սովորական է՝ ծննդաբերության հեռևանքով տենդից բռնված, ցնորած կամ զառանցող կանանց համար գործածել ἡ γυναικα ἀρμένισε (ի գինեկա արմենիսե = կինը արմենատար եղավ) խոսքը։ Այս չարիքը կանխելու համար ἀρμενο < ν > անուն մի խոտ (երիցուկ) և α.μενοξυλο (արմենոքսիլո = արմենափայտ) կոչված մի փայտ է դրվում տղացկանի և նորածնի բարձի ներքև կամ կախվում վրան։

Հատկանշական է, որ երիցուկը կոչում են αρμενια (արմենիա)։ Օրինակ, Իտալիայում (հյուս. արևմտ. Հունաստան) կոչում են՝ αρμενια, Ադրիանապոլսում՝ ἡ αρμενη, Բելգրեռոյում (արևմտ. Մակեդոնիա) ὁ αρμένους և այլն։ Այս խոսքը գործածում են իբրև հմայակ, կախարդանք կամ չար աչք արգելող ἀβασκαντήρα — արասկանտերա և իբրև դեղթափ՝ արմենատարության։

Արմենիս, արմենիդես կամ արմենիոն-ի գևեր կամ չար ոգիներ լինելու հավատքը գոյություն ունի նաև Դիոս կղզում։

---

[1] Πολίτου — Ἐκλογαι — (η Μαγισσα) № 172.

[2] „Ἀθηνᾶ", ΚΔ, էջ 467, Π. Παππαγεωργίου — Αἱ Σερραι καὶ ἡ μονὴ Ἰωάννου τοῦ Προδρόμου, էջ 242,

Դիոսում կա այն հավատքը, թե արմենիսները լույսեր են, որոնք հանկարծ վառվում են գիշերանց՝ լեռների մեջ, կամ ամայի տեղերից անցնելիս դեմդ են դուրս գալիս։ Այս կողում արմենիսների շուրջ ստեղծվել են սնոտիապաշտական բազմաթիվ զրույցներ։ Ահա դրանցից մի քանիսը.

«Մի արմենիս մտնում է մի տուն։ Նա լինում է բարձրահասակ, մեծ մորուսով, գլխին՝ մի բեպուբլիկ գլխարկ, բերնին՝ մի խոշոր ծխամորճ։ Ծխամորճից այնքան ծուխ էր բարձրանում, որ կարծես մի փուռ էր վառվում։ Անշարժ կանգնում է և երբ մոտենում են նրան, անհայտանում է»։

«Կամարավոր մի շենք կա Գամպիում։ Պատմում, են թե այնտեղ տեսել են արմենիսներ, որոնք գիշերանց պարում են կանանց հետ»։

«Մի մարդ գիշերանց տնից դուրս է գալիս, որպեսզի թակարդ լարի թռչունների համար։ Թակարդի մի ծայրը կապում է հորի մամլակին։ Երբ կանգնում է, լսում է մի փսփսոց և քիչ հետո տեսնում լապտերով մարդիկ, որոնք երգում են։ Մի արմենիս նրան տալիս է մի լապտեր։ Վախից՝ մինչև առավոտ կուչ է գալիս, ազոթում է և արմենիսները անհայտանում են»։

«Մի մարդ, մի օր Բալամոթի գնալիս վրա է հասնում գիշերը։ Հանկարծ տեսնում է, որ մի արմենիս է գալիս։ Երբ մոտենում է, արմենիսը գրկում է նրան և ասում. «ուզում եմ սերդ». «Դու ո՞վ ես», հարցնում է մարդը, արմենիսը չի պատասխանում։ Մարդը հանկարծ հիշում է, խաչ հանում, արմենիսը անհայտանում է»։

Այս ավանդությունները հավաքող Ստիլիանոս Դիոսը[1] հայտնում է, որ հույները արմենիս կամ արմենիդեսներին երևակայել են իբր մահարեր, չարագործ տարրեր կամ ոգիներ։ Դիոսում, մասնավորապես Կամպոխորա և Մաստիխոխորա ավաններում, չար ոգիները կոչվում են արմենիս և արմենիդես (հայ, հայեր)։ «Մի արմենիս տեսա» նշանակում է, «մի չար ոգի տեսա»։

Մի շարք ուրիշ հեղինակներ[2], հենվելով διαβατικόν τον εὕρηκε (անցվորիկի բռնվեց) արտահայտության վրա, գրում են, որ երբ մեկը դաշտում հիվանդանում է, անհանգիստ լինում, ջերմ կամ արևահարություն ունենում, ենթադրում են, թե հանդիպել է դևերի կամ չարքերի, որ դա ἀρμενιόες (արմենահարություն), ἀγερικά (այսահարություն) է և այլն։

Ըստ նորագույն բառգրքերի և բառագետների, հունարենում ἀρμενίζω նշանակում է առագաստ բանալ, նավարկել (մանավանդ առագաստանավով). փոխաբերական իմաստով՝ վարել, կառավարել, օրինակ δὲν ἀρμενίζεις καλά — լավ չես գնում, լավ չես վարում, (ոճաբանությամբ) մտացիր լինել, ուշակորույս լինել (ոամկորեն) ցնորիլ, զառանցել, խելագարվել (և մանավանդ) կախարդվել, որ միայն ծննդաբեր, տղացկան կանանց առնչությամբ գործածվում է։ Այսպես ἀρμένισε (արմենիսե) նշանակում է տենդից զառանցում է, կախարդվել է, աչքի է եկել և ἀρμενιάζμα (արմենիդմա) նշանակում է զառանցանք, ցնորանք, կախարդանք, չար-աչք, ինչպես նաև ἀρμενιζμα (արմենիզմա) և ἀρμενιάζμα (արմենիազմա) նշանակում է տղացկանի տենդ, տագնապ, կախարդանք, աչքի դալ, պիղծ ոգիների հարձակմանը ենթարկվել։

[1] Χιακαὶ Παραδοσεις. տես և „Λαογραφία", հատ. Բ. էջ 436—439։
[2] Κανελλακη—Συλλογη Κωνσταντινουπολεως № 7189։

Սերեզում գտնվում է՝ ἀρμενόπορτα (արմենոպորտա—արմենադուռ), որի փայտերից կտորներ են պոկում և ծխարկում տղացկանի մոտ, իբրև հմայակ։

Երբ մեկը կախարդված է համարվում, հանձնարարվում է մի կտոր փայտ, մի տաշեղ կտրել, պոկել այն տան դռնից, որի բնակիչներից է կախարդվողը, որպեսզի այդ փայտի կտորից պատրաստի հուռութքը կամ հմայեկը[1]։

Ուրեմն՝ արմենադուռից պոկվելիք փայտի կտորի հավատքը, ենթադրել է տալիս, որ կախարդվողը հավատում է, որ ինքը կախարդվել է արմենիս-ից (հայ) և նրա դռնից պոկված կտորով ուզում է պատրաստել հակագեղը, հմայեկը։

Արմենափայտը գնում են տղացկանի կամ երեխայի բարձի տակ կամ կախում են իրենց վրա։ Աղանդների պատմությունից հայտնի է, որ մարկիոնականները փայտե խաչը (այսինքն քրիստոսի խաչը) գործածում էին, դնելով հիվանդի վրա, որպեսզի հիվանդությունը անցնի «անիծից փայտինն»։

Հայտնի է, որ Ճմշկիկ կայսեր գաղթեցրած հայերի մեջ եղել են մարկիոնականներ, որոնք Թրակիայի ժողովրդի համար արմենիսներ էին։

Սերեզում գործածում են արմենաբար (ἀρμενοπετρα) որպես դեղթափ արմենահարության։ Այնտեղ երիցուկ բույսն էլ ἀρμενα է կոչվում։ Շատ հավանական է, որ հիվանդությունը (արմենահարությունը) դարմանողները առհասարակ եղել են հայ կախարդուհիներ և կամ հայ քահանաներ, որոնք ծխարկել են կամ խաշելով խմեցրել են այս բույսը (երիցուկը), որը և կոչվել է ἀρμενον (արմենոն) կամ ἄρμενια (արմենիա)։

Ավելի հաստատ վկայություն գտնում ենք «ծծաղկաբան-երգիչ Դավիթ Սալաձորցու մոտ, թե «սինձն, իրիցուկն և եղբրդակն կու ըսպասեն Արևորդուն. նոցա երանն ուրիշ է, կու շրջին զօրն հետ արևուն»[3]։

Արևորդիները պաշտում էին երիցուկ խոտը։ Շատ բնական է, որ բոնադաղթվող և Թրակիա հաստատվող աղանդավորներից Արևորդիները շարունակել էին իրենց պաշտամունքը և նրան վերագրել էին գերբնական ուժ։ Հավանաբար նրանք այն գործածում էին նաև կախարդությունների դեմ, որպես հմայակ՝ դեղթափ, մանավանդ ծննդաբերության դեպքում։ Հետևաբար հիվանդությունը արմենիսներին վերագրող հույնը, հայ աղանդավորների կողմից իբր դեղթափ գործածվող խոտն էլ (երիցուկ) հեշտությամբ և տրամաբանական հետևությամբ կոչել է արմենա։

Երեխաներ հափշտակող և տղացկաններին անհանգստացնող չար ոգիների գոյության հավատքը ընդհանուր էր ժողովուրդների մեջ։ Անտարակույս, հույներն էլ ունեցել են այդ սովորությունը։ Սբ. Սիսիանոսի ավանդության մեջ ծննդական Մելիտինեի երեխան հափշտակող Ռիլլուն, երբ ձերբակալվեց, խոստովանեց իր տասներկու և կես անունները՝ Ամորֆուս, Արիզու, Կարֆուս, Բրիանե, Բարդելուս, Եգիպտուհի, Բարնա, Քարքանիսարյա, Ատիքեա, Միգա, Պետոմենե և այլն։

---

[1] Համաձայն Մանիսայի հայերի ժողովրդական հավատալիքին, երբ մեկը աչքի է եկել, արևելք նայող փողոցի դռների յոթ սեմերից մի մի կտոր տաշեղ են առնում և ծխարկում հիվանդին։ «Բյուրակն», 1899 թ., № 28, էջ 438։

[2] Paul Perdrizet — Negotium Perambulus in Tenebris, 1922. Strassburg, էջ 24։

[3] Հ. Ղ. Ալիշան — Հին հավատք հայոց, Վենետիկ, 1910, էջ 104։

Բացի այդ, հունարենի մեջ կան տղացկաններին և մանուկներին վնասող մի շարք չար ոգիների անուններ, օրինակ՝ Մոռա, Մարմարու, Պետասիա, Պելագիա, Ալլետու, Լամիա, Էմպուսա, Մորմոլիկի, Սարիգլա և այլն։

Թրակիայում նորածիններին և ծննդկաններին վնասող չար ոգին նախքան «արմենիս» կամ «արմենիդես» անունը ստանալը, անշուշտ, կոչվել է այլ անունով։ Անվան այդ փոփոխությունը մեր կարծիքով, եղել է աղանդավորների Թրակիայում եղած ժամանակաշրջանում։

Ժամանակի ընթացքում արմենիսների (հայերի) դև կամ չար ոգի ճանաչվելը այնքան էլ զարմանք չպետք է պատճառի, երբ հայ և հույն մատենագիրները միաբերան այդպես էին որակում աղանդավորներին, երբ աղանդավորներն ու հերետիկոսները ճանաչվել էին դև, սատանա։

Հայտնի է, որ Հայաստանում էլ քրիստոնեության տարածման առաջին տարիներից ուժեղ հալածանք սկսվեց ինչպես հեթանոսության, այնպես էլ աղանդավորական շարժումների դեմ։ Քրիստոնեական եկեղեցու ղեկավարների կողմից աղանդավորները համարվում էին դևեր, և որպես այդպիսին ենթարկվում խստագույն հալածանքների։

Հետագա դարերում նույնպիսի հալածանքների էին ենթարկվում աղանդավորները Հայաստանում։

Գր. Նարեկացին գրում է.

«...քանզի լուայ, թէ յանյիշելի ամենազազիր մծղնէութիւն աղանդաւորութեան անիծելոց Թոնդրակեանցդ ի միջի ձերում բարեխոհիցդ յիշատակի»։

Եվ ջանալով համոզել, որ աղանդավորների գաղափարները սխալ են, նա շարունակում է.

«...որք են շարք շանց և գումարք գողոց, և գունդք գայլոց և դասք դիւաց, և աղինք աւազակաց և կոյտք կերչաց, և բոյլք բարբարոսաց և խումբք խաչահանուաց, և ժողովք չարեաց և արք արեանց և երամք թունաւոր ուձին և վտառք մարդադէմ գազանաց և կաճառք կախարդասարաց»։

Գր. Մագիստրոսը ասորիների կաթողիկոսին գրած իր պատասխան թղթում, աղանդավորների պետին որակում է՝ «մարմնացեալ դև», «կարապետ սատայելի», «անիծեալ շուն», «դապան արիւնըռուշտ», «վավաշ շամբուշ», «յղփեալ չարագործ», «դարան կորստեան»։

Ցանկանալով հայ ժողովրդի աչքում վարկաբեկել աղանդավորական շարժման ղեկավարներին, հայ եկեղեցու պետերը նրանց վերագրում էին նաև «անբարոյականություն», «խառնակեցություն» և այլ վատագույն արարքներ։

Արիստակես Լաստիվերտցին աղանդավոր Կունծիկ աբեղայի մասին գրում է.

«...Կունծիկ ոմն շնանուն աբեղայ, որ ունէր յինքեան զպղծութիւն խմորն... ժիր մշակ սատանայի, որսացյալ գկին ոմն, որում Հրանուշ կոչիր և գերկու կանանցն, մինչև Ախնի և միաբանումն Կամարայ։ Սոքա պոռնկական մոլեգին ախտիւն, որպէս օրէն է նոցին փարախին, և կախարդական արվեստի վարդապետք եղին սատանայի»։

Բանավոր հալածանքին հաջորդում է գործնականը։

Հաստատվում է հավատաքննություն։ Խստագույն հալածանքների են ենթարկվում աղանդավորները Գր. Մագիստրոսի և Սարգիս կաթողի-

կոսի օրով, երբ սուր ու հուր տարածվեց աղանդավորների լեռնային թագաստոցներում և հայ պետության ու եկեղեցու ձեռքով ազվեսադրոշմ խարանվեցին աղանդավորների ճաղատներին։

Հալածանքի սաստկացման արդյունքը եղավ այն, որ աղանդավորությունը տարածվեց նաև հունական թեմաներում և այս ձևով գրավեց հույն ուղղափառ եկեղեցու պետերի ուշադրությունը, որոնք առավել խստությամբ սկսեցին հալածել հայ աղանդավորներին, նրանց վերագրելով ամեն մի վատ արարք։

Հետևաբար թրակիայի բնիկ ժողովրդի և օրթոդոքս հույների աչքում, դաղթեցվող պավլիկյան հայերը (արմենիս) ոչ այլ ինչ էին, բայց դևեր, չար ոգիներ և կախարդներ։

Փաստերը վկայում են, որ 11-րդ դարում, արդեն թրակիայում գոյություն են ունեցել հայ կախարդուհիներ կամ արմենահատուհիներ (Ἀεαρμενιαστρα)։ Այդ հավատքը շարունակվել է մինչև մեր օրերը։ Ինքս ականատես եմ եղել այսպիսի մի դեպքի։

Մի օր Աթենքի հայոց առաջնորդարանը եկավ մի հույն կին, իր 9—10 տարեկան որդու ձեռքից բռնած։ Նա առաջնորդին հայտնեց, որ երեխան համբ է, ամեն տեղ դիմել է, բոլոր սրբերին մոմ է վառել, ուխտի է գնացել, սակայն ո՛չ մի օգուտ չի տեսել, եկել է, որպեսզի հայոց քահանան բուժի որդու հիվանդությունը։

Առաջնորդը բերել տվեց եկեղեցու բանալին, մտցրեց երեխայի բերանը՝, աղոթեց, մի քանի անգամ կրկնեց այս գործողությունը։ Բժբախտ մայրը մեկնեց այն հույսով, թե երեխան բուժվելու է... Այդ կինը հավատում էր, որ համբությունը չար ոգիների գործ է, իսկ հայ քահանան ունի այն հալածելու, վանելու կարողությունը։

Թրակիայում էլ տեսել ենք նման դեպք, երբ տղացկանի տագնապը չի անցել, կարդացնել են ավել հայ քահանայի։

Նման սովորություններ ունեցել են նաև հայերը։

Մշո շրջանի հայության մեջ գոյություն ուներ մի հավատք. երբ տղացկանը բռնվում է ծննդարերության ծանր ցավերից և դժվարանում է ծննդարերությունը, գնում են մոտակա մզկիթը և աղաչում են թուրք մոլլային (մուեզինին), որ սալավաթ (աղոթք) կանչի։ Մոլլան անմիջապես մինարեն էր բարձրանում և ասում մի մասնավոր աղոթք։

Այստեղ էլ հայերը ունեցել են այն համոզումն ու հավատքը, թե չար ոգիներն էին ծննդարերությունը դժվարացնողները, իսկ մոլլան, որ դևերի և չար ոգիների հետ հարաբերվող է, կարող է իր ցեղակիցներին (չար ոգիներին) ազդել։

Հետևաբար այս բոլորը պետք է նկատել նմանարուժության, չարը չարի ձեռքով հանելու հավատքի արտահայտություն։

Քիոսում, մինչև օրս էլ գյուղացիները վաշխառու, չարագործ, անզգամ, խեղ մարդոց տալիս են արմենիս անունը և լումայափոխներին նույնպես կոչում են արմենիա։ Կարծողներ կան, որ Քիոսում հայի չար ոգու իմաստ

---

[1] Սա, իհարկե, կուլտ-միմիկայի, նմանողական մագիայի մի ձև էր։ Ինչպես օր բանալին բաց է անում փակ դուռը, եկեղեցու բանալին էլ բաց էր անելու համբի փակ չքդուն։

ստանալը մնացել է թրքական տիրապետության շրջանից։ Այդ ժամանակներին, թուրք աղաների սեղանավորները, նրանց դրամ տվողները առհասարակ եղել են հայեր։ Արա իրը վարձատրություն, հայ սեղանավորներին տրվում էր տասանորդի տուրքի գանձումը։ Արանք գյուղերում, իրը հարկահավաք, նեղում ու չարչարում էին հույն բնակիչներին, մասնավորարար կղզու հարավային շրջանում, ուր արտադրվում է ամենաընտիր մազտաքան, որից տանում էին սուլթանի կանանոցը։ Ուստի նրանք, իրենց գործած բռնության համար, տեղացի ժողովրդի աչքում[1] համարվում էին ազետարեր տարը կամ չար ոգի։

* * *

Կասկածից դուրս է, որ Թրակիայում, զանազան թվականներին և զանազան ձևերով կենտրոնացված բազմահազար հայությունը, իր նոր բնակավայրում զբաղվում էր նաև առևտրով, արհեստներով, գյուղատնտեսական աշխատանքով, այս բոլոր բնագավառներում մրցորդ հանդիսանալով տեղական բնակչության հետ, որը բոլոր դեպքերում չէ, որ կարող էր հաշտ աչքով դիտել եկվորների տնտեսական աշխուժացումը։

«Պավլիկյանների արդյունաբերական և առևտրական բացառիկ ակտիվությունը և պատերազմներում քաջությունը, գրավել էին 8-րդ դարի կայսրերի ուշադրությունը»։ «Թրակիայի պավլիկյանները, առևտրական ու զինվորական հարաբերությունների մեջ գտնվել են նույնիսկ Հունգարիայի, Իտալիայի, Հարավային Ֆրանսիայի և այլ երկրների հետ»։

Ուստի, բնական է, որ նաև տնտեսական նկատառումով տեղացի որոշ խավեր կարող էին արհամարհանք և թշնամություն տածել պավլիկյանների դեմ։

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, հյուսիսային Հունաստանում, մասնավորապես Թրակիայում նկատում ենք հայկական հետքեր, որոնք շատ ավելի լայն ընդգրկում ունեն, քան հնարավոր էր ներկայացնել այս սեղմ հոդվածում։

Այդ հետքերը, որոնք առաջացել են դարերի ընթացքում, հիմնականում արդյունք են հայ ազանդավորական շարժման ծավալմանը Հունաստանում, ազանդավորների հաստատմանը՝ մասնավորապես Թրակիայի շրջանում, ազանդավորներ, որոնց նկատմամբ հունական եկեղեցին մզել է տնտեսական, քաղաքական և դաղափարական տևական պայքար, որի արդյունք պետք է համարել ազանդավոր հայերին չարքերի, դևերի հետ համեմատելը։

---

[1] Սուլթան Մահմուտ Ա.-ի (1747 թ.)-ի արար ներքինապետի գրածի համաձայն, ուսասիրությունը մեծ հանցանք էր և պատժի ենթակա։ Նման դեպքերում, պատիժը որոշելու և կամ կաշառքով ապատվելու գործի մեջ, հայերը մեծ օգտակարություն էին հայտնում, մանավանդ հայ ազանդավորներ։ (Տես Ελευθερουδάκη-Εγκυκλοπαιδικον Λεξικον-ἀβανία բառի տակ, որ նշանակում է՝ ֆնաս, ավեր, գրպարտություն)։

[2] Κ. Παπαρρηγοπουλου—Ιστ. του Ἑλλ. Ἔθνους—III-2. 74.